

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵՂՈՆՆԵՐԻ ՄԱԳՈՒՄԸ¹

ՎԵՏՏՈՐԵ ՓԻՋԱՆԻ* (Խուսիս)

1873 թ. յույս տեսավ Ավգուստ Ֆիկի «Հնդեվրոպական եվրոպայի երբեմնի լեզվամիասնությունը» („Die ehemalige Spracheinheit der Indogermanen Europas“) գիրքը, որի մեջ հայտնի հունագետը և հնդեվրոպաբանը բարեփոխության է ենթարկում Շլյախերի ծագումնաբանական ծառը, որը ենթադրում է հնդեվրոպականի՝ սլավոնա-գերմանական և արիա-հունա-իտալա-կելտական սկզբնական բաժանում: Նա, հակադրվելով Յոհան Շմիդտի ալիքների տեսությանը („Die Verwandtschaftsverhältnisse der indogermanischen Sprachen“, 1872), ըստ որի գոյություն է ունեցել համապատասխանությունների մի շղթա արիականի և բալթիկ-սլավոնականի միջև, աշխատում է ապացուցել, որ հնդեվրոպականի առաջին բաժանման հետևանքով առաջացել են արիական և եվրոպական միասնություններ: Հիմնվելով հատկապես բառապաշարի փաստերի վրա, Ֆիկն այս տեսակետը զարգացրել է իր «Հնդեվրոպական լեզուների համեմատական բառարանում» („Vergleichendes Wörterbuch der Indogermanischen Sprachen“), որի առաջին հրատարակության մեջ վերականգնված արիական «լեզվամիասնությունը» („Spracheinheit“) հակադրում է եվրոպականին: Բառարանի միայն չորրորդ հրատարակության մեջ է (1890 թ.), որ այս վերջին միասնությունը նա բաժանում է երկուսի՝ «կենտրոնական լեզուների» („die Sprachen der Mitte“), այն է՝ բալթիկ-սլավոնների ու «պոնտացիների»՝ Սև ծովի շուրջն ապրող ժողովուրդների, և արևմտյան եվրոպայի ժողովուրդների լեզուների: Բայց ընդհանուր առմամբ եվրոպայի լեզուները շարունակում են դիտվել որպես միասնություն՝ արիական լեզուների համեմատությամբ:

Նման տեսակետ է րնկած Բրանդենշտայնի «Հնդեվրոպական առաջին գաղթը» („Die erste indogermanische Wanderung“, 1936) տառափառության հիմքում, որտեղ գիտնականը տարբերակում է հնդեվրոպական ժողովուրդների երկու «հայրենիք»՝ առաջինը Ուրալյան լեռնաշղթայի հարավային սասի և Կիրգիզիայի տափաստանների միջև, երկրորդը՝ արևելյան Լեհաստանում, Ռուկիտնոյի ճահիճների շրջակայքում: Ինչպես ենթադրվում է, նրանք այստեղ էին եկել սրիացիներից բաժանվելուց հետո: Ավելի վերջերս Հանս Կրահեն «Հնդեվրոպերենը և հնեվրոպերենը» („Indogermanisch und Alteuropäisch“) ողջաձուլ (1957 թ.) և այլուր բազմիցս խոսել է մ. թ. ա. II հա-

¹ Այս հոդվածը 2002 թ. լեզվի ինստիտուտում կարգադրված այն երկու դասախոսությունների տեքստն է, որոնցում ես ամփոփում եմ իմ «Հնդեվրոպերենը և եվրոպան» („Indogermanisch und Europa“, München, 1974) գրքույկը. այնտեղ կարելի է գտնել նաև ստանդարտական նշումներ, որոնք ես բաց եմ թողնում:

* Նշանագրեր գիտնական Վ. Պիգանին պատկանում է իտալական նեոլիթիկիստների դպրոցին, որից և բխում է հոդվածի կոնցեպցիան (խմբ.):

դարասյակում գոյություն ունեցած «հնդեվրոպական լեզվամիասնության» մասին («alteuropaischer Sprachenkomplex»):

Իսկապես, Եվրոպայի հնդեվրոպական լեզուները ինչպես քերականության, այնպես էլ բառապաշարի տեսակետից հիմնականում միասնական են՝ արիական լեզուների՝ մասնավորապես սանսկրիտի համեմատությամբ: Ինչպես՝ բացատրել այդ միասնությունը: Օգտվենք Գամար դա դժվար չէ: Ինչպես արել է Ֆիկը, ելակետ է ընդունվում մի միաձույլ հնդեվրոպական նախալիզու, որը բաժանվել է երկու ճյուղի՝ արիական ու եվրոպական: Վերջինիցս էլ առաջացել են գերմանականը, բալթիկ-սլավոնականը, իտալյանը և այլն: Բայց արդեն էդ. Հերմանը («Über das Rekonstruieren», «KZ», 41, 1907) ցույց է տվել, որ անհնար է այդ խմբերից ելնելով խոսել միաձույլ հնդեվրոպականի մասին: Նրա ապացույցը կարող է նույնությամբ կիրառվել եվրոպական լեզվամիասնության նկատմամբ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մասնակի կամ ամբողջական ղուգաբանությունների (իզոգլոսների) նշանակալի բանակություն՝ տարածված աշխարհի այդ մասի հնդեվրոպական լեզուներում, ինչպիսիք մենք գտնում ենք սրտնց ամենահին հուշարձաններում: Նույնը կարելի է ասել նաև ռոմանական լեզուների վերաբերյալ: Ինչպես վերջիններս (եթե բացառենք այն, ինչ հետևանք է շփումների և հետագա զարգացման) շարունակությունն են ժողովրդական լատիներենի անվան տակ միավորվող բարբառների, այդպես էլ, թերևս, Եվրոպայի հնդեվրոպական լեզուները վկայում են մի գաղութատիրական երկրի գոյության մասին, որտեղ որոշակի թվով բարբառներ՝ միացած ղուգաբանությունների՝ մեկից մյուսին անցնող ցանցով, ձևավորվել են մի լեզվի առաջնորդությամբ: Այսպիսով, ես կարծում եմ, որ Եվրոպայի հնդեվրոպականը կազմավորվել է նվաճողների խմբերի կողմից խոսված լեզվի (որը ես անվանում եմ նախասանսկրիտ) ու Եվրոպայի հնդեվրոպական լեզուների մակադրմամբ: Ինչ վերաբերում է այդ նախասանսկրիտին, այն պետք է ունեցած լիներ նվաճողների էթնիկական, սոցիալական և այլևայլ բաղադրիչներով պայմանավորված ներքին տարբերություններ, բայց, անկասկած, նրան Վեդաների լեզվի նման ուղղություն էր տալիս մի բանավոր գրական լեզու, որ պատկանում էր ամենից առաջ հոգևորական դասին և որի հետքերը պահպանված են այսպես կոչված հնդեվրոպական բանաստեղծական լեզվում: Իհարկե, այդ մակագրումը տեղի չի ունեցել միևնույն ժամանակամիջոցում և նման պայմաններում, այլ տարբեր նվաճումների միջոցով, ինչպես վկայում է լատիներենի տարածումը ռոմանական Եվրոպայում: Այստեղից էլ՝ այդ արշավանքների հետևանքով Եվրոպայում կազմավորված «հնդեվրոպական» նոր բարբառների ծայրահեղ բաղադրանությունը, որ հետևանք է մի կողմից՝ նախասանսկրիտի եկամուտ բարբառների տարբերությունների և արշավների տարածամանակության, մյուս կողմից՝ այդ բարբառների ենթաշերտը հանդիսացող հնդեվրոպական լեզուների բաղադրանություն:

Եվրոպայի հնդեվրոպական լեզուների վերաբերյալ վերը շարադրված ենթադրությունները հաստատվում են հնագետների հայտնագործություններով. որոնք (ինչպես օր. Մարիա Գիմբլտասը) վկայում են, որ մ. թ. ա. III հազարամյակում Սև և Կասպից ծովերի միջև գոյություն է ունեցել այսպես կոչված կուրգանների մշակույթ: Այն մակաշերտվել է մի կողմից՝ Եվրոպայի

նորքարեղարյան և պղնձեղարյան, մյուս կողմից՝ Միջագետքի և Փոքր Ասիայի մշակույթների վրա: Կուրգանների մշակույթն առաջացել է 'Հազարամյակների և Կովկասի աճյունաստվորների դաշտերի մշակույթների միավորումից: մի բան, որ լեզվաբանորեն հաստատվում է միլենիկի կողմից: Նրան միանում են Գորնունգը և ուրիշները: Ըստ Ուլենբեկի հնդեվրոպական առաջացիլ է երկու լեզվական տիպերի՝ կցականի և թեքականի հանդիպումից ու ձուլումից:

Այսպիսով, III հազարամյակի վերջում կազմավորվել է նվաճողների և քաղաքակրթողների մի ժողովուրդ, որ պատրաստ էր իր գերիշխանությունը հաստատելու համար հիմնել հասարակություններ, կազմելով կրոնավորների և ռազմիկների դասերը (ըստ 'Եյումեդիլի տերմինաբանության՝ առաջին երկու ֆունկցիաները), այնինչ ենթակված ժողովուրդները, նվաճողների հասարակական կարգն ու աշխարհայացքն ընդունելով, դառնում էին մշակներ և արհեստավորներ (ըստ Դյումեդիլի՝ երրորդ ֆունկցիան): Կուրգանների մշակույթն ըստ իս ալգայիսի հասարակության առաջին իրականացումն է, որի ընթացքում սահմանվել և հաստատվել է նախասանսկրիտի լեզվական տիպը: Այստեղից է, որ շարունակելով էթնիկական նոր ալիքի առաջին հիմնադրողների շարժումը, մեկնել են նվաճողների խմբերը, որոնք հաստատվելով նվիրույթում և իրենց հասարակությունների մեջ ընդունելով տեղաբնակ ցեղերին, կազմել են կենտրոններ, նման, բայց վարը նշված պատճառներով ոչ նույնական լեզուներով: Բայց եթե մի կողմից՝ այդ բարբառների միջև անկասկած կային երբեմն շատ ղգալի տարբերություններ, մյուս կողմից՝ ակնհայտ է, որ նրանք կարող էին մասամբ մոտենալ միմյանց: Դրան կարող էր նպաստել կամ ընդհանուր ենթաշերտը (ինչպես, օրինակ, իտալերենի բարբառները կարող են խմբավորվել ըստ ենթաշերտ հանդիսացող Նախահռոմեական լեզուների, որոնք ձևափոխել են նվաճողների լատիներենը), կամ էլ ընդհանուր շուկաների, ամֆիկտիոնների գոյությունը, ավելի կարևոր կենտրոնների առաջացումը, մի բանի ցեղերի՝ մեկ դաշնակցության մեջ միավորվելու և այլ պատճառներով նոր հարաբերությունների հաստատումը: Իս կարող էր հանգեցնել միմյանց հետ բավականին թույլ կապեր ունեցող լեզվամիասնությունների առաջացմանը, ինչպիսիք են, օրինակ, գերմանական կամ սլավոնական կոչված բարբառների միասնությունները: Անշուշտ, հատուկ դեր են խաղացել «բանաստեղծներն» ու «ճարտասանները», որոնք նպաստում էին հնդեվրոպական «բանաստեղծական լեզվից»՝ նախասանսկրիտից սերված բանավոր գրականության և նրա լեզվի հարատևմանը: Այդ երևույթի հետ կարելի է համեմատել ալբանական կոյնների ձևավորումը (դեգերեն, տոսկերեն), որ հիմնական գծերով հստակորեն նկարագրված է սովետական լեզվաբան Դեսնիցկայայի կողմից²:

Նախասանսկրիտի որոշ երևույթների անհետացման հետ մեկտեղ նվիրույթի հնդեվրոպականին հատուկ էին և որոշ նորամուծություններ, որոնք հաճախ տեղային բնույթ ունեին, ինչպես օրինակ՝ բայի վերականգնումն ըստ ներկայի և անցյալի, որի հետևանքով վերանում էր անցյալ անկատարի և անցյալ կատարյալի տարբերակումը, պերֆեկտի անհետացումը, որը քրիս-

² Տե՛ս, օրինակ, «Роль устных койне в истории образования албанского литературного языка», М., 1974.

տոնեական դարաշրջանում հունարենի ազդեցության տակ մասամբ վերակառուցվում է այն բարբառներում, որոնք հետագայում վերածվել են գերմանական, բալթիական և մասամբ էլ սլավոնական լեզուների, «թույլ» բայերի կազմավորումը, որոշ բառերում gh-ի փոխարինումը g-ով, ինչպես, օրինակ, հունարեն *εγω*, լատիներեն *ego*, գոթերեն *ik*՝ սանսկրիտի *aham*-ի դիմաց, հունարեն *μικς* և գոթերեն *mikils*՝ սանսկրիտի *māhi*, *mahānt*-ի դիմաց, շնչեղ ձայնեղների անհետացումը, որոնք մասամբ (բալթիական, սլավոնական, կելտական, ալբանական և այլ երկրներում) միաձուլվում են պարզ ձայնեղների հետ, *h*-ի փոխարինումը *m*-ով գործիականի, տրական-բացառականի և այլ վերջավորություններում՝ գերմանական և բալթիկ-սլավոնական լեզուներում, *oino*-ի (մեկ) գործածությունը լատիներենում, գերմանականում, բալթիականում՝ *e-ka-*, *aēva-* և այլ ձևերի փոխարեն, անցյալի է- վերջածանց գերմանականում և օսկերենում և, հատկապես, բառապաշարային զուգաբանությունների առաջացումը, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է տարբեր շրջան և որոնք մասամբ հետևանք են նախասանսկրիտի նյութի վերասշակման, մասամբ էլ գալիս են ենթաշերտ հունդիսացած հնեվրոպական լեզուներից։ Այդպիսիք են, օրինակ, «մարդ» նշանակող բառերը, որոնք ծագում են «հող» նշանակող բառից՝ լատիներեն *homo*, գոթերեն *guma*, լիտվերեն *zmuo*, լեհերեն *h*ին իռլանդական հոգնակի *duine*՝ լատիներեն *humus*-ի և այլ ձևերի դիմաց, «մորուք» արտահայտելու համար՝ լատիներեն *barba*, գերմաներեն *bart*, լիտվերեն *barzda*, սլավոներեն *brada*, «հյուր» արտահայտող բառը, որ ի սկզբանե նշանակել է «օտարական»՝ լատիներեն *hostis*, գոթերեն *gasts*, սլավոներեն *gostl*, «բաղաքական ընդհանրություն» արտահայտելու համար՝ օսկերեն *touto*, իռլանդերեն *túath*, գոթերեն *piuda*, լիտվերեն *tauta*, «շաղկամ»-ի համար՝ լատիներեն *rāpum*, գերմաներեն *Rube*, լիտվերեն *ropė*, սլավոներեն *rěpa*, «այծիկ»-ի համար՝ լատիներեն *haedus*, գոթերեն *gaits*։

Հատկապես հետաքրքիր կլինեն մեր մայր ջամաքի հնդեվրոպական լեզուներում բացահայտել այն հնեվրոպական լեզուների մնացորդները, որոնք հետագայում կլանվել են նախասանսկրիտի բարբառների կողմից։ Այդ լեզուներից բեկորներ են փրկվել և պահպանվել մինչև մեր օրերը՝ Եվրոպայի հնդեվրոպական լեզուների կողքին, ինչպես, օրինակ, բասկերենը կամ ֆիննա-ուգրական լեզուները։ Հին ժամանակներում այս բազմաձև ենթաշերտը կարելի էր գտնել Իտալիայում (էտրուսկերենը, ռետերենը), Հունաստանում, Ֆրանսիայում, Իսպանիայում և այլուր։ Այն պահպանվել է հուշարձաններում, արտացոլվել ինքնատիպ տեղանուններում, հունական և հռոմեական գրողների վկայություններում և այլն։ Այս բոլորը վերաբերում են այն տերիտորիաներին, ուր հնդեվրոպացիները եկել են, ինչպես մեզ հայտնի է, նախապատմական ժամանակներում։ Բայց ի՞նչ կարելի է ասել այդ ժամանակներին նախորդող հին հնդեվրոպականի մասին, որ մենք անվանում ենք Եվրոպայի հնդեվրոպական։ Այստեղ հատկապես արիերենի հետ համեմատությունն է, որ մեզ տալիս է արժեքավոր տեղեկություններ³։ Այսպես, օրինակ, այն փաստը, որ Եվրոպայում հանդիպում ենք կայուն և հնչույթաբանական արժեք չունեցող շեշտով լեզուների՝ այն գծից արևմուտք, որը Բալթիկ ծովից հասնում է

³ Այս պրոբլեմի վերաբերյալ հմտ. L. Bednarczuk, Problem przedindoeuropejskich języków Europy, *Biuletyn Polskiego Towarzystwa Językoznawczego*, 33, 35-55

մինչև Ֆիումեի ծովախորշը և երկու մասի է բաժանում սլավոնական ու բալթիական լեզվախմբերը, իսկ նույն գծից արևելք գտնվող լեզուները սանսկրիտի նման շարժուն և հնչույթաբանական արժեք ունեցող շեշտ ունեն, մեզ հանգեցնում է այն մտքին, որ նախասանսկրիտի բարբառները Եվրոպայում ևնթարկվել են նման բաժանման և փոխել են շեշտավորման իրենց սեփական համակարգը, եթե այն չի համապատասխանել արտամղվող լեզուների շեշտավորմանը: Բացի այդ, շնչեղ ձայնեղները կորցրել են շնչեղությունը բոլոր եվրոպական լեզուներում և, բացառությամբ հունարենի, դարձել են ձայնեղ շփականներ: Սրանք հետագայում դարգացել են, փոխվելով մասամբ շնչեղ պայթականների, մասամբ էլ (հատկապես Իտալիայում) խուլ շփականների: Ծնթաշերտի ազդեցությանը կարող են վերագրվել՝ բայի վերը նշված փոփոխությունները և մասնավորապես բալթիական բայի երրորդ դեմքի եզակիի, երկակիի և հոգնակիի միջև եղած տարբերությունները, կամ էլ լիտվերենի և գերմանականի «տասնմեկ» և «տասներկու» թվականների կազմությունը ոչ թե «տաս» թվականի, այլ «մնում է» նշանակող բառի օգնությամբ (լիտվերեն *vienūlika, dvylika, qnթերեն ain-lif, twa-lif*). քսանորդական համակարգը, որ տեղ-տեղ թափանցում է տասնորդական համակարգի մեջ, օրինակ, ալբաներենում, որտեղ *dy zet* «երկու քսան» համարժեք է *katrë djetë*-ին «չորս տաս» «քառասունի» համար և, անշուշտ գալլերենի միջոցով, ֆրանսերենում, որտեղ *soixante-dix, quatre-vingts* և այլ ձևերը փոխարինում են *setante, huitante* և այլ ձևերին: Առանց այլևս շարունակելու օրինակները, կարևոր էմ համարում ընդգծել, որ Ենթաշերտի այս ազդեցությունները կատարվել են տարբեր ժամանակաշրջաններում և փոփոխության են ենթարկել նախ ժողովրդի լեզուն, հետո միայն անցել են ավելի բարձր դասակարգերի լեզվին:

Այս ձևով առաջացած եվրոպայի հնդեվրոպականի ներսում աշխարհագրական և պատմական գործոնների ազդեցության տակ կազմավորվել է տեղական խոսվածքների մի միասնություն, կապակցված ավելի կամ պակաս տարածված և իրար ամբողջովին չծածկող ղուգաբանությունների հսկայական թվով: Լեզվական այս միությունները խիստ համասեռ չեն: Նման ձևով է, որ ժողովրդական լատիներեն կոչվող խոսվածքներից առաջացել են իտալական, ֆրանսիական, իսպանական և այլ բարբառները, որոնք հանդես են գալիս գրական լեզուների միջոցով: Վերջիններս ամրապնդում են նրանց միասնությունը և ներկայանում որպես կաղապարներ այդ բարբառները այս կամ այն լեզվամիությանը վերագրելու, դրանք իտալերեն, ֆրանսերեն և այլն անվանելու համար, չնայած այն խոր տարբերություններին, որ կարելի է գտնել, օրինակ, Պիեմոնտի և Ապուլիայի իտալերեն համարվող բարբառների միջև: Այսպես էլ կազմվել են գերմանականը, բալթիականը, կելտականը և այլն, որ կարելի է համարել գիտական հորինվածքներ: Դրանք մեղ օգնում են ընդհանուր հասկացության ներքո միավորելու մեր իսկ կողմից սահմանված անկյան տակ դիտվող փաստերի որոշակի քանակություն:

Մինչ այժմ մեր ուշադրության կենտրոնում էին եվրոպայի լեզուները (բացառությամբ հունարենի): Մենք քննեցինք, թե ինչպես էր եվրոպայի հյուսիսում և կենտրոնում ստեղծվել լեզուների հարաբերական մի միասնություն՝ կապված նվաճողների խմբերի գալստյան հետ: Մնում է քննել, թե ինչ պատահեց նվաճողների համանման մի ներխուժման հետևանքով այն տերիտո-

րիայի հարավում և արևմուտքում, որտեղ կազմավորվել է նախասանսկրիտը: Խոսքը հատկապես վերաբերում է Անատոլիայի և Միջագետքի շրջաններին, որտեղ, ինչպես գիտենք, դոյուլյուն ունեն բաղաձայնական հնդեվրոպական լեզուներ: 1) «արիական» կոչված տարրերը Միտանիի օնոմաստիկայում և այլ մնացորդներում (ինչպես ձիաբանական տերմինաբանությունն է Կիկուլիի ձևանարկում, կամ էլ կասիտների լեզվում), 2) հայերենը, 3) անատոլիական լեզուները՝ ամենից առաջ սեպագիր խեթերենը, լիկիերենը, լիդիերենը, կարիերենը, 4) արևելյան հունարենը, այսինքն այն հունարենը, որից սերում են Փոքր Ասիայի և բուն Հունաստանի հոնիական բարբառները, ինչպես և Կիպրոսի ու Պելոպոնեսի հարավային էոլիական կոչված բարբառների ամենահին շերտը: Պետք է այստեղ տարբերակել ավելի հին փոքրասիական հունարենը, որ կարելի է կոչել բնիկ հունարեն, և գաղութների հունարենը: Գաղութների բնակիչները հեռացել էին հունական թերակղզուց այն բանից հետո, երբ արևելյան հունարենը այնտեղ կազմել էր համահունական լեզվական տիպի հիմքը՝ էոլացիներ և դորիացիներ կոչված նվաճողների հնդեվրոպական բարբառների հոսքի հետևանքով: Այստեղից պարզ է դառնում, թե ինչու է հունարենը դժվարություններ հարուցում ծագումնաբանների առջև՝ կենտրոնական լեզվի իր բնույթով:

Բնականաբար, այն լեզուները, որ ես թվեցի՝ հայերեն, անատոլիական լեզուներ, արևելյան հունարեն, լիդիյն կաղմ ու պատրաստ լեզուներ չեն եղել, որ բերվել են այս տերիտորիաները, որտեղ սերել են բարբառներ կամ «դուստր» լեզուներ, ինչպես հին դպրոցի ծագումնաբանները պատրաստ կլինեին երգվել: Դա կարող է ասվել նաև Միջագետքի արիացիների մասին, որոնց վերաբերյալ ավելորդ կլինեն վիճել, թե դրանք հնդիկներ են, թե իրանցիներ: Պետք է ենթադրել, որ նվաճողների տարբեր ալիքների բերած լեզվական երևույթները յուրաքանչյուր անգամ հայտնվել են լեզուների որոշակի խմբերում: Վերջիններս աստիճանաբար մոտեցել են միմյանց կամ տեղական լեզուներին հարմարվելու, կամ էլ որոշ կենտրոններում տարբեր ծագում ունեցող ցեղերից կազմված քաղաքական, տնտեսական և մշակութային համախմբումների առաջացման հետևանքով, առանց, սակայն, բացարձակորեն համասեռ և միաձուլվել միասնությունների կազմելու: Այստեղ պետք է հատկապես շեշտել հետևյալ նախադրյալները.

1) Եվրասիայում, ասենք IV հազարամյակում, կարելի է խոսել ոչ թե «ժողովուրդների» և «ազգերի» գոյության մասին, այլ ավելի շուտ փոքր ինքնավար համայնքների, գյուղերի, որոնք անշուշտ հաղորդակցվում էին միմյանց հետ, բայց սովորաբար չէին կազմում կենտրոնական իշխանության տակ միավորված քաղաքական խմբավորումներ:

2) Առաջին անգամ նման մի խմբավորում է առաջացել միջագետքյան-եգիպտական տերիտորիայում, հասնելով մշակութային և տնտեսական այնպիսի զարգացման, որ շարժում էր նախնական մշակույթ ունեցող թափառական ցեղերի նախանձը, այնպես, ինչպես պատմական ժամանակաշրջանում Հունաստանն է առաջացրել կիմերների և դալատների մեջ, Իտալիան՝ գալլերի և հետո՝ գերմանների, քրիստոնյա աշխարհը՝ արաբների մեջ և այլն: Եվ բնականաբար, այդ պատճիվ ֆունկցիայի հետ մեկտեղ՝ եգիպտական և միջագետքյան քաղաքակրթությունները ակտիվ դեր են խաղացել, արտահանելով ոչ միայն նյութական և բարոյական մշակույթի, այլև հասարակական

և քաղաքական կաղամակերպությունների: Նրանք օրինակ են ծառայել նվաճողներին իրենց իշխանությունը կաղամակերպելու և հաստատելու, և բնակության սկզբնական վայրերում մնացողներին՝ հասարակական կյանքի նոր համակարգ ստեղծելու համար:

3) Նվաճողներն անշուշտ իրենց հետ բերել են տարբեր լեզվի ու ցեղի արկածախնդիրներին: Տիշենք լանդոբարդներին, որոնց զորքերում գտնվում էին ոչ գերմանացիներ, կամ էլ ավարներին ու հոներին:

Սակայն նվաճողները միայն արևելքից և կովկասյան շրջաններից է, որ եկել են: Միջագետքյան էլիտրադոյի հռչակը պետք է հասներ ոչ միայն արևելք՝ հեթանոսների ու նովելների միջոցով, այլև նեղուցներից այն կողմ՝ կենտրոնական-արևելյան Եվրոպա ու հետևաբար հյուսիսային հնդեվրոպականին, որի մասին քիչ առաջ խոսել ենք: Այստեղից գաղութատիրական և նվաճողական նպատակներով անշուշտ եկել են նկարագրված ձևով առաջացած բարբառներով խոսող հնդեվրոպացիների նոր ալիքներ, որ կարելի է համեմատել եվրոպացիների տարբեր ալիքների ներհոսքի հետ Ամերիկա՝ նրա հայտնադործումից հետո: Բոլորին հայտնի են «ծովի ժողովուրդների հորդանների» առաջացրած վերափոխությունները II հազարամյակի առաջին կեսին: Այդ արշավանքների թվին է պատկանում նախաէոլացիների և նախադորիացիների ներթափանցումը միկենյան Հունաստան:

Փոքր Ասիայի վերաբերյալ պետք է նշել Սև ծովի հյուսիսային ափին մնացած թրակացիների հետ անշուշտ ազգակից փոյուզացիների ժամանման պատմական փաստը, որոնք վերջիվերջո ընդունեցին Միջագետքի թագավորություններին նմանվող քաղաքական կաղամակերպություն, իսկ փոյուզացիների մասին Հերոդոտն ասում է, որ հայերը փոյուզական վերաբնակիչներ են՝ *Ἰωνῆες*։ Այս տեղեկության ճշմարտացիության վերաբերյալ վիճաբանությունները հիմնված են այն համեմատությունների վրա, որ ծագումնաբաններն արել են փոյուզերենի խղճուկ մնացորդների և պատմական հայերենի միջև, առանց հաշվի առնելու այն փաստը, որ պատմական հայերենը արդյունք է տեղական՝ ասենք ուրարտական տարրերի և հնդեվրոպական տարրերի միաձուլման, ներմուծված մի կողմից՝ արևելքից եկած նվաճողների, մյուս կողմից՝ փոյուզական ցեղերի միջոցով: Վերջիններս գուցե Հայաստանի մի մասում հաղթող են եղել և այնտեղ պետություններ կաղամել, ինչպես այդ պատահել է Միտանիի «արիացիների» հետ և այլն: Հնարավոր է, որ հյուսիսից եկած այդ նվաճողներն են բերել հոգնակիի ք-ն⁴: Եվ այստեղ ես պետք է հիշեմ Պորցիգի կարծիքը արիերենի և հայերենի որոշ դուզաբանությունների վերաբերյալ, ինչպես, օրինակ, հայերենում՝ աբև, իսկ սանսկրիտում՝ *ṛavis*, հայ.՝ ձի, սանսկր.՝ *hāyas*, հայ.՝ աբծիլ, սանսկր.՝ *śipyaś* (բազեի համար), հայ. երգ, սանսկր.՝ *arkās*, որ նա վերագրում է Սև ծովի հյուսիսում հայ-արիական ընդհանրության ժամանակաշրջանին, բայց ես հակված եմ դրանք վերագրելու Միջագետքի արիական նվաճողների և հատկապես «բանաստեղծական լեզու» օգտագործող հոգևորական կաստայի հետ ավելի ուշ շրջանում տեղի ունեցած շփումներին:

⁴ Հմտ. V. Pisani, Zum armenischen Pluralzeichen -k', „Zeitschrift für vergleichende Sprachforschung“, էջ 39, 94.

Ինչ վերաբերում է խեթերին և մյուս անատոլիական լեզուներին, ապա նրանցում իմ աշակերտ Գուսմանի կողմից իր «խեթերենի բառապաշարը» («Il iessico ittito») գրքում նշված արևմտյան տարրերի առկայությունը պետք է բացատրել նրանց՝ Եվրոպայից բերված լինելով:

Եթե, այսպիսով, նշված լեզուներից յուրաքանչյուրը կարող ենք ընդունել որպես տարբեր ծագում ունեցող տարրերի միավորում, նշանակում է այդ լեզուները ոչ թե մեկը մյուսի հանդեպ փակ օրգանիզմներ են եղել՝ հասած երևակայական «Հնդեվրոպայի» վիճակի, այլ որ քաղաքական, տնտեսական, ռազմական իրողությունների, ինչպես և նոր բնակավայրերում սովորած գրավոր լեզվի կիրառման շնորհիվ ազգերի կազմավորման հետևանքով նրանք ձևավորվել են որպես գրական և ազգային լեզուներ՝ վեր բարձրանալով բարբառների վրա, որոնք կարելի է նրանց վերագրել այսքանով, որքանով նրանք ընդհանուր բառապաշար ունեն. վերջինս աճում է հատկապես շնորհիվ օրինակելի մոդելներ դարձած գրական լեզուների ազդեցության, բայց և բարբառային տարրերի ներմուծությամբ լեզվի մեջ, որ երբեմն կարող է հիմնականում նույնանալ այդ բարբառներից մեկի հետ, ինչպես, օրինակ, հին ֆրանսերենը, որը հետզհետե ձևափոխվել է՝ նույնանալով մայրաքաղաքի՝ Փարիզի բարբառի հետ: Այս կապակցությամբ պետք է ընդգծել, որ միատեղումների և միավորումների այս պրոցեսները տեղի են ունենում ոչ թե «լեզուների», այսինքն՝ իրական փաստերի (լեզվական միավորման ներսում տեղի ունեցող իրար նման, բայց միշտ տարբերվող լեզվական ակտերի) վերացական ինքնագոյությունների միջև, այլ առանձին առնված իրողությունների միջև, որոնք տարածվում են, կազմելով յուրաքանչյուրն իր համար մի զուգաբանություն և որոնք մարդիկ որպես նյութ օգտագործում են իրենց լեզվական գործունեության մեջ («energeia»), ամեն անգամ ստեղծելով խոսքային իրողություն («ergon»), որ իր կառուցվածքով և իր տարրերով կարող է ստեղծել «energeia»-ի իրագործման համար անհրաժեշտ պայմաններ՝ նույն կամ այլ անհատների նոր լեզվագործունեության ընթացքում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այն բանից հետո, երբ նման ձևով առաջացել են քիչ թե շատ համասեռ «միջազետքի արիերենը», «իրաներենը», «հայերենը», նրանք հավանաբար շարունակել են փոխադարձաբար միմյանց վրա ազդել՝ կամ խոսակցական բարբառների, կամ էլ ամենից հաճախ գրավոր ձևով հանդես եկող ազգային լեզուների մակարդակում, ինչպես դա տեղի է ունեցել հունարենի և լատիներենի, բալթիական և սլավոնական լեզուների միջև և այլն:

Մի վերջին դիտողություն. մենք ընդունեցինք նախասանսկրիտը որպես Եվրոպայի և Ասիայի մի զգալի մասի հնդեվրոպականացման ակունք. բնականաբար նման ձևով էլ այս նախասանսկրիտը ընկել է արիական լեզուների հիմքում: Բայց պետք է ենթադրել, որ այդ լեզուները առանձնացված չեն մնացել նախասանսկրիտից սերված այլ լեզուների հանդեպ, մի բան, որ տեսանք հայերենի և սանսկրիտի հարաբերության քննության կապակցությամբ. մասնավորապես բալթիկ-սլավոնական լեզուների օրինակը ցույց է տալիս, որ արիերենի հետ ունեցած ընդհանուր գծերից շատերը երկար ժամանակ պահպանվել են. այդ երևում է հատկապես նախկին քմային բաղաձայնների սատեմացումից, մի իրողություն, որ արիերենի հյուսիսում անցել է նշված լեզուներին և այնուհետև իլլիրականին ու թրակերենին, մինչդեռ հարավում

այն համարյա ամբողջությամբ տարածվել է մինչև հայերենը և մի քանի անատոլիական լեզուներ: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ նվաճողների ցեղերի տարածումը տեղի է շատ դարեր, բայց, ըստ երևույթին, «բրահմանական» կենտրոնը շարունակել է բավականին մեծ ազդեցություն ունենալ. ինչպես կելտերի կամ բալթիական ժողովուրդների մոտ, որտեղ հայտնի է այնպիսի կրոնական կենտրոնների գոյությունը, ինչպիսին Հռոմն է կաթոլիկների համար: Հին հնդեվրոպական ժողովուրդների պատմության մեջ հոգևորական դասը առաջնակարգ դեր է խաղացել հատկապես հասարակական ձևերի, այդ թվում և լեզվի, պահպանման ու զարգացման գործում:

Թարգմ. ֆրանսերենից՝ Ա. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

ПРОИСХОЖДЕНИЕ ИНДОЕВРОПЕЙСКИХ ЯЗЫКОВ

ВИТТОРЕ ПИЗАНИ (Италия)

(Резюме)

В статье пересматривается проблема происхождения индоевропейских языков. Утверждается, что индоевропейские языки Европы образовались в результате насаждения диалектов протосанскрита — языка индоевропейских завоевателей — на палеоевропейские языки. Крайнее разнообразие новых «индоевропейских» диалектов, сложившихся в Европе, объясняется, с одной стороны, расхождениями в привнесенных диалектах протосанскрита и одновременностью нашествий, а с другой стороны, — разнообразием субстрата — палеоевропейских языков. Что касается индоевропейских языков Азии (армянский, анатолийские языки, восточный греческий), то к насаждению протосанскрита на местные языки здесь добавляется влияние индоевропейских диалектов пришельцев из центрально-восточной Европы. В статье подчеркивается взаимосвязь и взаимовлияние разных индоевропейских языков, связанных значительным количеством изоглосс. Предполагается также, что «брахманский» центр играл главную роль в поддержании и развитии индоевропейских языков.